

լեցնելէ յետոյ, ետ բերին Աշտիստան: Մերկ, թշուառ, բոկոտն, անօթի, ծա-
րաւ վիճակ մը ունեցանք: Սկսանք մտորալ: Այսպէս ամիս մը մնալէ վերջ Կե-
տարիոյ սէվդիաթներէն ալ մեզի միացնելով դարձեալ ճամբայ հանեցին, եւ
այս անգամ կէսը Ռեքօայի կողմը, իսկ մնացեալ կէսերնիս ալ զշեցին Զէյ-
թուլի կողմը: Տասն օրէն աւելի քալելէ ետք մտանք Զէյթուն: Այս տասը
օրուան միջոցին քաղաքի երես տեսած չէինք: Իսկ Զէյթուն այրուած, քան-
դուած, աւերակ էր. եկեղեցին կը ծխար տակաւին: Գիշեր մը Զէյթուն մնա-
լէ ետք առտուն ճամբայ ելանք եւ երեք օրէն հասանք Մարաշ: Օր մը կեցանք
այստեղ ուր տեղւոյն հայերը սիրով վարուեցան մեզի հետ եւ օժանդակու-
կութիւններ ըրին: Ուտելիք, հագնելիք եւն. տուին: Անդու՞ ժանտարմա-
ները ճամբան անոնց տուած հազուատներն ու անկողինները առին մեր ձեռ-
քէն եւ այրեցին: Մարաշցիները նաեւ իրենց դրասանները մեր տրամադրու-
թեան տակ գրին եւ այսպէս եկանք Այնթապ:

Կիւրիսէն մինչեւ Այնթապ որ 10 օրուան ճամբայ է, 3-4 ամիսէն բերին
մեզ: Հինգ օր մնացինք Այնթապ եւ շատ բարիքներ տեսանք Տոքթ. Մերլիէն:
5 օր վերջ անոնք որ մանչ զաւակներ ունէին դատուեցան եւ Պապ դրկուեցան:
Բնացեալներս Այնթապէն 5 ժամ հեռու Արը դիւղը տարին եւ անկէ ալ բո-
ւարտիքի դիւղերը բաժնեցին, իւրաքանչիւր զիւղի 30-40 ընտանիք տալով:
Ասոնց մէջ էին Շահպաղեանները, Պահատուրեանները, Գալալճեանները եւ
Ֆէրմանեանները: Յիշեալներս որ 47 հողի էինք, 19 հողի մնացինք մինչեւ
այն ատեն: Կիւրիսի մուխթար Մարգիս աղային աղջիկը, Թրուանաա Շահ-
պաղեան, որ դիւղացիի մը կողմէ առեւանդուած էր եւ բռնի ճիւղի եղած՝
մինչեւ հիմա կը մնայ անոր քով: Գիւղին մէջ դարձեալ կողոպտեցին, այ-
սինքն առին ամէն ինչ որ տուած էին Մարաշցիք: Մահուան սարսափը ան-
պակաս էր մեր վրայէն: Կեցած դիւղերնուս անունը Պաքալ էր. մեզ 47 հողի
քարայրի մը մէջ լեցուցած էին ուր անձրեւը եւ ցուրտը անպակաս էր մեր
վրայէն: Ամէն օր մեր թշուառ մայրերը Մարաշ կ'երթային: Շատերը ջըր-
հորներուն մէջ կախեցին «տաճկեցէք» ըսելով: Ուրիշներ դիւղէն դուրս հա-
նելով ամէն ինչ ի դործ գրին: Մէջերնիս գրեթէ կոյս չմնաց: Մէկուկէս տա-
րի այս դիւղը մնացինք յետոյ երբ իմալաթխանէ (օրբանոց-ապաստանա-
բան) բացուեցաւ՝ փախանք եկանք հոն:

Օրերով լացինք հոս ալ, բայց այլեւս չունէինք սարսափն ու մեզ
սպառող չարչարանքներ:

Փարիզ «Նուպարեան Մատենադարանի»
ձեռագիրներէն

ՍԱԹԵՆԻԿ ԳԱԼԱՅՃՅԱՆ

3.— ԿԻՒՐԻՍԻ ԶԱՐԴԵՆ ՈՒ ԱՐՍՈՐԸ

1915 Ապրիլին մէջ Սուլթան Բէշտափ տարեգարձը կը տօնուէր: Առաջ-
նորդ Խորէն Եսս. Դիմաքսեան այս առթիւ շնորհաւորութեան դացած էր:
Կառավարութիւնը իր յարգանքներն եւ պատիւները կը շտալէր մէկ կողմէ
հայ պետին, միւս կողմէն սակայն հայերը ձերբակալելու հրահանգ կը յղէր
ամէն կողմ:

Օրուան տօնին առթիւ տեղական իշխանութիւնը կը հրահանգէր եւ կը
պարտադրէր քաղաքին խանութները շքեղազարդել, միւս կողմէ հայերը ա-
նակնկալի բերելով կը հրաւիրէր կառավարչատուն եւ հոն կը բանտարկէր

դանոնք, նոյնիսկ կարելով դանոնք արտաքին հաղորդացութենէ: Նոյն օրուայ մէջ իրենց պէտք եղած հայերը ձերբակալուած էին: Եւ մինչեւ 8-10 օր տուանց հարցաքննութեան միւս հայութիւնն ալ իրենց տուներէն, ճամբաներէն եւ գիւղերէն ձերբակալեցին: Յետոյ մունետիկներու միջոցով ազդարարեցին թէ՛ բոլորը հայ թէ թուրք պէտք է իրեցն դէնքերը յանձնն կտա՞վարութեան: Թուրքերուն դէնքերը ցերեկը տաին եւ դիշերը ետ դարձուցին. իսկ հայերուն դէնքերը առնելու համար ամէն տեսակ երգումներով, խարբայութիւններով եւ սպառնալիքներով հաւատացուցին, թէ կուսակալութենէ եկած մասնաւոր հրահանգի համեմատ պատիւի, կեանքի եւ ապրանքի կատարեալ ապահովութիւն պիտի ըլլայ, միայն թէ պէտք է դէնքերը յանձնուէին: Հայերը հաւատացին եւ յանձնեցին:

Մինչ այդ 15 տարեկանէն մինչեւ 70 տարեկան մարդիկ բանտարկած էին, ինչպէս նաև շարք մը կիներ: Եւ ամէն օր, այս վայրենիները ժողով կը գումարէին Ռուստուք գառնէ Մուսալմալտի տունը եւ հոն կ'որոշէին ու կը փոխէին շարչարանքներու կերպերը, հայերու վրայ ի գործ դրուելու համար:

**

Բանտի կեանքը եւ շարչարանքները.— Կենդանիները ախոռ լեցնելու պէս մէկ սենեակի մէջ շեցուած էին 100 մարդ, որոնք ոտքի վրայ կենալու իսկ տեղ հաղիւ կը դանէին: 2-3 օր անօթի պահելէ ետք ատոնցմէ մէկիկ-մէկիկ կը տանէին եւ առանձին սենեակի մը մէջ, ուր ներկայ կը գտնուէին վերոյիշեալ պաշտօնականները եւ հայ ջարդելու համար մասնաւորաբար կազմուած երգուեալ հուժկու ժանտարմաներէն երեք հատ, մէկէն կը սկսէին լուսանքներով հարցաքննել՝ յետոյ ծեծել բանտարկեալները: Ծեծելու կերպը՝ նախապէս վերարկուն դիտուն կը փաթթէին, եւ այդ երեք ժանտարմներուն իրաւունք տրուած էր իրենց ուզած ձեւով քանի մը հարուածներ տալ եւ դետին փռել ենթական: Երբ թիզ մը փոշիի թանձրութեան մէջ քիթն ու բերանը այդ փոշիին մէջ թաղուած ըլլար, ժանտարմայ մը դիտուն վրայ կը նստէր, իսկ միւս երկու ժանտարմաները ձեռքերնին առնելով երկու դիմացուուն ծանր դաւաղաններ, պառկող խեղճ հայերուն երկու կողմը դէմ առ դէմ կեցած, փոխն ի փոխ կը զարնէին 50-100 զաւազան, մինչեւ որ մարէին, մարելէն վերջ կը զազրկեցնէին, ջիւ անց կը սթափեցնէին եւ կրկին մէջքին վրայի եւ վարի մտակրուն շուր թափելով կը սկսէին նորէն ծեծել, եւ այս՝ կը շարունակուէր մինչեւ որ 2-3 անգամ մարէին եւ սթափէին եւ այլեւս անդամարոյժի պէս անկարող դաւանային շարժելու: Յետոյ կը մխիթարէին զանոնք սինիկարար ըսելով՝ թէ «ձեր Յիսուսն ալ շարչարանեցաւ եւ պատուիրեց, որ դուք ալ շարչարուիք, որպէսզի արքայութիւն երթաք: Այս է ձեր աւետարանին պատուէրը»: Բոլոր բանտարկեալները կարգով ամէն օր այս շարչարանքին կ'ենթարկուէին: Այս տեսեց ամիսի մը չափ: Չմտնանք ըսելու որ երբեմն ալ տուներնին կը տանէին եւ հոն մօր, կնոջ եւ զաւակներուն ներկայութեան կը ծեծէին նոյն վայրագութեամբ: Պատահեցաւ որ սլաթիկ 5 տարեկան տղայ մը — Չուլճեան Թէրճանի փոքրիկ Յարութիւնը — տեսնելով իր մօրեղբօր կերած դաւաղանները եւ չգիմանալով անոր ազաղակներուն, օճախէն վառած միճակի մէջ խոշոր փայտ մը կը քաշէ եւ կ'երթայ ժանտարմային կը զարնէ ըսելով թէ «ինչու կը ծեծես»: Ծեծի տակ մեռնողներ շատ եղան: Մարդոց մարմինն գոյնը փոխուած էր սեփ-սեւ չուխայի գոյնի: Եւ—

տերու մխերը փառած եւ խոշոր-խոշոր վէրքեր բացուած էին եւ դեռ այդ վիճակին մէջ ալ կը շարունակէին ծեծը: Այս շարժարանքները կատարեալ ընելու համար սկսան տաք շիջերով տաղել, ոտքին պայտ վարնել, երկու ձեռքերը դեպին գամել, եղունգները քաշելու փորձեր ընել: Պէտք է մտնաս, որ կիներն ալ մասն ունեցան այդ բարբարոսութենէն: Ոտքերը վեր, զլուխը վար գանոնք իրենց ամուսիններուն ներկայութեան ծեծել եւ ուրիշ անսանտկան ամէն աներեւակայելի արարքներու ենթարկել, որոնց ի տես ամուսինները չգիմանալով այդ սոսկալի վայրագութեանց՝ անձնասպան ըլլալու փորձեր ըրին:

Այս միջոցին էր որ Սվազէն Ալայ պէշ անունով մէկը եկաւ եւ շարդի կազմակերպութեան վրայ խորհրդակցելէ ետք, Տարէնտէ եւ անկէ ալ Մալաթիոյ շրջանը դնաց ըտուեցաւ:

Քանի մը օր միջոց տուին որ ծեծի տակ անգամալուծուողները քիչ մը կապուարուին եւ կարեան քաշել: Յետոյ 90-100 մարդէ կազմուած խումբ-խումբ բաժնելով կանչեցին եւ մէկիկ մէկիկ իֆատէնին առին եւ ստորադրել տուին, իբր թէ այդ իֆատէն Սվազ պիտի դրկէին եւ իրենք ալ հոն պիտի երթային ու իֆատէ տային կրկին եւ եթէ հոն անմեղ տեսնէին պիտի արձակէին գիրենք: Մինչդեռ այս բոլորը սուտ էր: Մոյն թղթերը յետոյ պատուեցին: Այս կերպով հաւատացուցին թէ իսկապէս հարցաքննութեան կը դրուելուն: Եւ ահա առաջին խումբը 3-4 օր լեռները անօթի ծարու պտըտոցնելէ յետոյ, սուրենքով ոչխարի պէս կը մորթեն: Գնդակներուն ալ կը մեղքեան յետոյ, սուրենքով ոչխարի պէս կը մորթեն: Գնդակներուն ալ կը մեղքեան ըսելով որ «դուք գնդակ մը չէք տրտեր, դուք քեաֆիւ էք պէտք է մորթենք»: Եւ ամէն օր նոր խումբ մը կը դրկուէր եւ այդ կերպ կը բնաջնջէին կարգով: Բայց միւսները առաջինին չափ չեն հեռացներ, այլ հետզհետէ մօտ տեղեր կը շարդուին: Ամենէն վերջին խումբը 13-15 տարեկան պատանիներէ բաղկացած էր: Ասոնց հասակները մէկ մէկը երկար պարանով կը չափեն եւ այդ չափէն աւելի հասակ ունեցողները կը կտակեն եւ քաղաքին եղերքը տանելով անոնք ալ կը մորթեն եւ կտալը արիւնջուայ ետ կը բերեն: Իսկ Առաջն. Խորէն Եսյ. Իլմաքսեան եւ Բողոք. Պատուելի Պետրոս Մուշաբեան եւ քահանաները կառքով ճամբու կը գնեն նոյն յանկերգով իբր թէ Սվազ պիտի դրկեն, եւ մէկ ժամ վերջ կառքը ետ կու դայ, կտարած է ըսելով: Ալանատեաներ կը պատմեն թէ անոնք ալ կառքին մէջէն գլուխին դուրս հանել տալով կը մորթեն եւ Սրբազանին ալ գլուխը կը բերեն քաղաք: Այդպէս պատուերուած է եղեր գանոնք շարդողներուն: Կ'ըսեն որ պաշտօնեայ մը՝ որ հակառակորդ է եղեր Առաջնորդին, ուզեր է անպատճառ տեսնել զլուխը որպէսզի սպահովուի:

Այլեւս քաղաքին մէջ 13 տարեկանէն վեր պատանի չկար բացի անոնցմէ՝ սոսնք փախելով չընտուելու ճարպիկութիւնը ունեցած էին: Կառավարութիւնը եւ յիշուալ յանձնախումբը կը կանչեն այս 10-13 տարեկան պատանիները, անոնց հետ նաեւ կիները եւ կ'առաջարկեն խլամամալ: Այդ տղոցմէ անոնք որոնք կ'ընդգիմանան հոն իսկ բոլորին ներկայութեան անոնց գլուխները կը կտակեն: Միւսները երբ կը տեսնեն այս՝ կը խելագարին եւ կ'իսլամամանն պրախնին ճերմակ սարը]ս փաթթելով: Այլեւս այդ մարդ չկար, սոնոնց յատուկ շարդը վերջացած էր: Հիմա կարգը կիներունն էր:

Գայմագամը իր արբանակներով քաղաքին մէջ կը սկսի պարսիւ, տուները մանել եւ ուղածը, հաւածը առնել: Գիւղացիներուն ալ առիթը կը տրուի. անոնք ալ թաղերը պտըտելով կը սկսին խեղճ ու կրակ վիճակի մէջ

մնացող կիները թալանել։ Կառավարութիւնը հայ ջարդելու համար կազմած չէթէները կը զրկէ. անոնք ալ կը սկսին իրենց հրամայուածին պէս աւելիով շարձարել։ Գայմագամին դիմում կ'ընեն մեղմացնելու համար եղածը, ան ալ կ'ըսէ թէ հոս չպիտի մնաք, պիտի դադարէք։ Եթէ կ'ուզէք, որ ձեզի հանդիստ Այնթապ զրկեմ, պէտք է վճարէք։ Առաջին խումբէն 2000 օսմ. ոսկի դրամ կը պահանջէ, եւ ատկէ վատ ալ կ'լինելուն զարգեղէն ոսկիները։ Անոնք կը բաժնեն գումարը իրենց խումբին միջեւ։ Ատկէ դատ, մնացած սպրանքները ինքզինքնին անհատապէս բարեկամ կեղծելով, թէ ուր որ երթան հոն փոխարէնը օր մը զրկելու խոստումով կը խաբեն, եւ ընաւ սպրանք ծախել չեն տար, եւ ամէն կողմ ալ խօսք կ'ընեն որ առնող չըլլայ։ Թէեւ կ'լիներ կառահելով եղածները կ'ուզեն դիմազրել, բայց չէթէի խումբեր կը հասնին թազերու մէջ, կը մտնեն տունէ տուն եւ դուրս կը հանեն 1500-2000 առաջին պարխաւամ գաղթախումբը եւ մէկէն ճամբու կը դնեն. եւ այսպէս հետզհետէ յաջորդաբար կը հանեն ուրիշ խումբեր, այնպէս որ 4-5 անգամով բոլոր այդ կիները, պատանդներն եւ աղջիկները լեռները կը թափին։ Այս կիներու հետ խառնուած շանի մը փախտակահան այր մարդիկը, առաջին օրն իսկ, անոնցմէ դատելով, Պահրի անուն գազանը իր ձեռքով կը մորթէ զանոնք, իրր թէ ինք ժողովուրդին պաշտպանութեան համար Գայմագամին կամ կառավարութեան կողմէ զրկուած էր։ Քանի մը կ'լինէր եւ աղջիկներ նոյն զիշեր կ'առեւանդէն եւ կը լլկեն։ Ահապէս դրամ առնելով մինչեւ Այնթապ սպանով զրկելու խոստումները պարսպ խօսք էր, միայն մէկ օր հետեւին ընկերացան, եւ այդ օրն ալ իրենք կազուպտելով անպաշտօն կերպով, դարձան ետ Կիւրին։ Այդ խումբը խեղճ ու կրակ վիճակի մէջ հասաւ Ալզիւտան։ Այժմ կարգը այս վայրենիներուն էր։

Ալզիւտանի թուրք գայմագամը նախապէս ծպտուած գիշերանց կու գայ կ'լինելուն մէջ եւ խալամութիւն կը քարոզէ։ Կը վերադառնայ տուն, յետոյ պաշտօնակահան հանգամանքով կու գայ. հոն աչքի զարկած արժէքաւոր ինչքերը՝ 100 ոսկի արժած ինչքի մը 2-3 ոսկի տալով բռնի կ'առնէ։ Եւ որպէսզի զլրենք սպանով Այնթապ հասցնէ 1000 ոսկի կը պահանջէ եւ կ'առնէ։ Մինչ այդ սոյն գաղթականները դեռ պաշտօնապէս կողոպտուած չէին։ Այլեւս գայմագամը իր պահանջած դրամը, էճնաս, դարդեր եւ սպրանքներ իր արբանեակներուն հետ առնելով, ինք ալ միասին ճամբայ կ'ելլէ անոնց հետ որպէս թէ Այնթապ պիտի տանին։ Գայմագամը իր պաշտօնեաներով 3 օր ճամբայ կու գայ։ Այդ օրերու մէջ ալ շատ պատանդներ, կ'լինէր տանելով չմորթելու համար ունեցածնին ամբողջ կ'առնեն։ Երեք օր վերջ երբ որոշուած տեղը կը հասնին, սարերու վրայ կը տեսնեն դիւղացիներ, քիւրտեր որոնք հրացաններով երբեմն երբեմն դնդակներ կ'արձակէին. կը հասնին ձոր մը քարուտ, խիտ ուռիի ծառերով ուրիշ փախչել անկարելի էր։ Այն ատեն քիւրտերէն երկու մարդ կու դան, գայմագամին հետ կը տեսակցին։ Քիչ ետք գայմագամը կը սուլէ, որուն վրայ հարիւրաւոր քիւրտեր կը սկսին դնդակներու տարափ մը տեղացնել ժողովուրդին վրայ։ Կիւրինցի ջորեպանները՝ որ մինչեւ հոն բերած էին կարտանը, իրենց միւրուն դուրսը կը դարձնեն ետ եւ այդ բերուած բոլոր սպրանքները իրենց հետ կը տանին, տիրանալով սուրանքին, որոնց վարձքը արդէն աստնադատիկ առած էին։ Բոլոր կիները այլեւս կը թողուն ունեցածնին եւ կը փախչին։ Գայմագամը եւ պաշտպանութեան համար եկող պաշտօնեաները կը զուարճանան տեսնելով հայ կնոջ ան ու սարսափը, կեցած անպատկառօրէն հեռուէն կը զիտեն այս քառմանի տեսարանը։ Դեռ ինչե՞ր, ինչե՞ր պատահե-

ցան: Չորս կողմէն եկող զիւղանցիները հեազհեաէ կը խուժեն անպաշտպան կիներու վրայ, իրենց կացիները, մերկացուցած սուրերը այս ու այն կողմ շարժելով՝ որուն հանդիպողը անկենդան դեախն կ'իջնար: Այս ձորը Ալախտանէն դէպի Այնթապ 15 ժամ էր: Գնդակներու տարափէն շատեր կ'իջնային արդէն... մանուկը կը տեսնէր մայրը դեախն փռուած՝ դուրսը երկուքի բաժնուած կացիներ հարուածին տակ... մայրը կը տեսնէր իր փոքրիկը քիւրտերու սուրներուն վրայ, որ «մայրիկ» կ'ըսէ ու կը մեռնի:

Կիներէն շատեր կը փախչին ձգելով իրենց զաւակները: Մանուկները «մայրիկ» կը պռռային բայց մայրը չէր կրնար դառնալ: Այս զարհուրելի աղաքակները լեռներն ու ձորերը կը թնդացնէին, իսկ խուժանը դեռ իր վայրագուած մանուկները մորթել կու տային իրենց մօր ձեռքով, ոմանց մի քանի անդամները կարելով հոն կը ձգէին որ շուտ չմեռնի: Աղջիկները, կիները առեւանգել եւ անոնց հետ ինչ ձեռով փարուելնին մարդ տրարածը չի կրնար երեւակայել եւ խօսիլ: Այս բարբարոսային ձեւերով կողոպտելէ՝ կիներն ու աղջիկները մերկացնելէ յետոյ, իրենց հետ առնելով աւարը, հաւնած աղջիկներն ու կիները կը տանին հետերնին: Գայմազամը եւ պաշտօնեաները դեռ կը դիտեն հոն շնահանօրէն: Այլ խուժանին երթալէն ետք, մնացորդ գաղթականներու կ'ընկերանան նորէն այդ նոյն գայմազամն եւ իր պաշտօնեաները եւ 4-5 ժամ ճամբայ երթալէն յետոյ, հոն դեախ մը եղերքը դիչերել կու տան. կէսը հաղիւ կը հասնի հոն, տեղ մը՝ ուր անկողինի տեղ քար կայ, հացի տեղ՝ խոտ: Հետեւալ օրը անօթի ծարաւ կը քալեցնեն, մէկ մասը՝ որ այդ կտորածէն ապաստած էր, անոնք ալ անօթութենէն կը մեռնին: Գայմազամը արդէն երկրորդ օրն իսկ դարձեր էր, իր պաշտօնեաներով, բաժնելու համար քիւրտերու առած ուարը: Կիւրիներն Այնթապ՝ որ 8 օրուան ճամբայ է, այդ խեղճ կիները ճիշդ ամիս մը կը քալին շարշարուելով. անոնցմէ քառորդը հազիւ Այնթապ հասած է: Այս ձեռով բոլոր խուժար խուժար եկող հայ կիները ու պատանիները շարժարանքով, անունդի պակասով, սուրով մեռած են, ճամբաներու վրայ, լեռներու եզերքը, ժայռերու տակ: Շատ քիչեր հասած են Այնթապ, ապա՝ Հալէպ:

«Նուպարեան Մատենադարանի» ձեռագիրներէն

ԵՂԻԱ ԽՐԸՏԵԱՆ

4.— ԲԱՂՈՒԱԾՔՆԵՐ ԹՈՒՐԳԻՈՑ ՄԷՋ ՄԱՀԱՑԱԾ ԳԵՐՄԱՆԱՑԻՒ ՄԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ (*)

1915 թուականի Յուլիս 28-Օդոստոս 20 ճանապարհորդութիւն մը կատարեցի դէպի Մարաշ: Քիլիսի եւ Այնթապի միջեւ գտնուող Պէշկէօղ զիւղի բնակիչներուն խօսակցութեան նիւթը այն էր, որ հայերու տեղահանումը Այնթապէն ալ պիտի սկսէր յաջորդ օրը: Քիչ մը ետք, լաւ հազուած մարդ մը, որ չերթէր կը կարծուէր ըլլալ, մասամբ Միւֆթիի եւ մասամբ սպայի համազգեստ հագած ըլլալուն համար, մօտեցաւ ժողովուրդին եւ հարցուց — «Քաղաքին ո՞ր շրջանէն կը հեռացուի ժողովուրդը. ո՞ր ճամբով կ'երթան եւ ի՞նչ տեսակ մարդիկ են անոնք, բանով մը կրնա՞նք օգտուել անոնցմէ»: Ներկաներէն մէկը երբ իրեն հարցուց թէ ինք քաղաքային մարդ էր թէ գիւնուորական, ան ժրջապետով ըսաւ — «Ձինուոր ըլլալու աւելի սքանչելի առի՞թ կայ, եթէ ոչ հիմա»:

(*) «Գեորգիանիա, Թուրքիա եւ Հայաստան» գիրքէն, տպ. Լոնտոն, 1917: